ԵՊՀ «REGISTRAR» ՀԱՄԱԿԱՐԳ

«Registrar» համակարգից կարող են օգտվել միայն ԵՊՀ աշխատակիցները և ուսանողները:

Համակարգը հասանելի է https://reg.ysu.am հղումով:

Մուտք համակարգ

Մուտքը համակարգ իրականացվում է ԵՊՀ էլեկտրոնային փոստի միջոցով:

Պատուհանի ձախ մասի մենյուի «Log in with Google» կետը սեղմելուց հետո հայտնվում է նոր պատուհան, որտեղ պետք է մուտքագրել ԵՊՀ էլեկտրոնային փոստի հասցեն և ծածկագիրը:





Ելք համակարգից

«Registrar» համակարգից դուրս գալու համար պետք է սեղմել պատուհանի վերևի աջ անկյունում գտնվող «Դուրս գալ» կոճակը:



Կարևոր. Քանի որ մուտքը «Registrar» համակարգ իրականացվում է ԵՊՀ էլեկտրոնային փոստի միջոցով, ապա բացվում է ոչ միայն «Registrar» համակարգը, այլ նաև էլեկտրոնային փոստը: «Registrar» համակարգից դուրս գալով էլեկտրոնային փոստը չի փակվում: Եթե չեք ցանկանում, որ էլեկտրոնային փոստը բաց մնա, ապա պետք է նշել «**Դուրս գալ նաև gmail-ից**» վանդակը: